



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

### WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԵ ՕՐԷՆԸ ՔԱՌՆԹԻ Ս. ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, այս Կիրակի Երկրորդ Ծաղկազարդ է:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Օրէնճ Քառնթիի Սրբոց Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը:

Ս. Պատարագի աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ Արի Կիրակոս Մինասեան Ազգային Վարժարանի Մանկապարտեզի ամավերջի հանդեսին, որ տեղի պիտի ունենայ Եկեղեցւոյ կից «Դուկասեան» սրահին մէջ:

### PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT FORTY MARTYRS CHURCH IN ORANGE COUNTY

This Sunday is the seventh Sunday of Easter which is known as Second Palm Sunday.

H.E. Archbishop Moushegh Mardirossian will preside over Divine Liturgy and deliver the sermon at Forty Martyrs Church in Orange County.

Following the service, the Prelate will attend the A.G. Minassian School Kindergarten graduation which be take place at "Gugasian" Hall.

\*\*\*

### ՅԱՐՈՒԹ ՊԱՐՍԱՄԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՖՈՆՏԻ 2011-2012 ՏԱՐԵՇՐՉԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԱԳԻՐՆԵՐ

Արեւմտեան Թեմի բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Ազգային Վարչութիւնը եւ «Յարութեան Պարսամեան Կրթական Ֆոնտ»-ի Յանձնախումբը այսու կը յայտարարեն, թէ ուսումնական

յառաջիկայ՝ 2011-2012 տարեշրջանին համար, դիմումնագիրներ կ'ընդունին «Յարութ Պարսամեան Հայ Ուսանողներու Կրթաթոշակ»ին համար:

Հիմնադրամը հաստատուած է Փրոֆ. Յարութ Պարսամեանի կողմէ, աջակցելու համար հայ ուսանողներու, որոնք կը փափաքին բարձրագոյն ուսման տիրանալ Միացեալ Նահանգներու որեւէ վարկաւորուած համալսարանի կամ Գոլէճի մէջ:

Նշենք, որ բարերարին փափաքին համաձայն, այս կրթաթոշակը բաց է բոլոր հայ ուսանողներուն համար:

Դիմումնագիրին պէտք է կցել.-

- Ուսանողին ամփոփ կենսագրականը
- Վկայագիր մը՝ ամերիկեան որեւէ օրինաւոր համալսարան կամ քոլէճ ընդունուած ըլլալու մասին:

Կը խնդրուի դիմումնագիրները Ազգ. Առաջնորդարան յղել մինչեւ 31 Օգոստոս, հետեւեալ հասցեով.-

**Harut Barsamian Armenian Students Scholarship Fund**

C/O Western Prelacy

6252 Honolulu Ave., La Crescenta, CA 91214

**“HARUT BARSAMIAN SCHOLARSHIP FUND” ACCEPTING APPLICATIONS FOR THE 2011-2012 ACADEMIC YEAR**

His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate, the Executive Council, and the “Harut Barsamian Scholarship Fund” Committee hereby announce that applications for the Scholarship Fund are being accepted for the 2011-2012 academic year.

The Fund was established by Prof. Harut Barsamian to assist students of Armenian descent in obtaining higher education at any accredited college or university in the United States.

Per the request of Prof. Barsamian, scholarships are now available to all Armenian students.

The application for the scholarship should include:

- A short biography of the applicant
- A certificate from the college or university about the status of the applicant as a student.

Applications must be submitted by August 31<sup>st</sup>, 2011, to the following address:

**Harut Barsamian Armenian Students Scholarship Fund**

C/O Western Prelacy

6252 Honolulu Ave., La Crescenta, CA 91214

\*\*\*

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ Դ.Յ.Դ. ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԵՆ ՌՈՒՍՏԱՄԵԱՆԻ  
ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ**



Հինգշաբթի, 2  
Յունիսի յետմիջօրեին,  
Թեմիս քարեխնամ  
Առաջնորդ Բարձր. Տ.  
Մուշեղ Արք. Մարտիրոսեան  
ընդունեց Դ.Յ.Դ.  
Հայաստանի Գերագոյն  
Մարմինի ներկայացուցիչ եւ  
Հայաստանի  
Հանրապետութեան Ազգ.  
Ժողովի արտաքին  
յարաբերութիւնների  
մշտական յանձնաժողովի  
նախագահ Տիար Արմէն  
Ռուստամեանի

այցելութիւնը, ընկերակցութեամբ Դ.Յ.Դ. Արեւմտեան Միացեալ  
Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Տիար Աւետիք  
Իզմիրլեանի: Հանդիպումին ներկայ էին Հոգեշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիմեան,  
Արժ. Տ. Վազգէն Զինյ. Աթմաճեան, Ազգ. Վարչութեան ատենապետուհի  
Տիկին Ռիմա Պողոսեան եւ փոխ ատենապետ Տիար Ճորճ Զորպաճեան:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց հայրենի հիւրը, որուն առաջին  
այցելութիւնն էր Ազգային Առաջնորդարան: Տիար Ա. Ռուստամեան, որ  
հիմնականին մէջ Մայիս 28ին նուիրուած հանդիսութեանց առիթով Լոս  
Անճելըս կը գտնուի, Առաջնորդ Սրբազանին ու ներկաներուն հետ  
տեղեկութեանց ու տեսակետներու փոխանակում ունեցաւ Հայաստանի  
այժմու իրադրութեանց եւ զարգացումներուն մասին: Խորհրդակցութեան  
նիւթ եղան Հայաստանի քաղաքական կեանքի նորագոյն  
իրադարձութիւնները, Սփիւռքը յուզող հարցեր եւ առհասարակ հայկական  
գաղութներու կրած փոփոխութիւններն ու անոնց դիմագրաւած հարցերը:

Յարգելի հիւրը նաեւ առիթ ունեցաւ ծանօթանալու Արեւմտեան մեր  
Թեմի ընդհանուր պատկերին, Ազգ. Առաջնորդարանի յարկին ու հովանիին  
տակ տարուող եկեղեցական, քրիստոնէական դաստիարակութեան,  
երիտասարդական եւ դպրոցական աշխատանքներուն: Հրաժեշտի պահուն,  
Առաջնորդ Սրբազանը Տիար Արմէն Ռուստամեանի եւ Աւետիք Իզմիրլեանի  
նուիրեց յիշատակի նուէրներ:

**PRELATE WELCOMES ARMEN RUSTAMYAN  
REPRESENTATIVE OF THE ARF SUPREME BODY IN ARMENIA**



On Thursday, June 2<sup>nd</sup>, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy Mr. Armen Rustamyan, representative of the ARF Supreme Body in Armenia and Chairman of the National Assembly Standing Committee on Foreign Relations. He was accompanied by ARF Central Committee Chair Mr. Avedik

Izmirlian. The Prelate was joined by Very Rev. Fr. Barthev Gulumian, Rev. Fr. Vazken Atmajian, Executive Council Chair Mrs. Rima Boghossian and Vice-Chair Mr. George Chorbajian.

The Prelate welcomed Mr. Rustamyan, who is in Los Angeles on a brief visit to participate in an event celebrating the 93<sup>rd</sup> anniversary of the first Republic of Armenia.

The discussion centered on the state of affairs and current developments in Armenia, as well as issues concerning the Armenian Diaspora and Armenian communities in general.

Mr. Rustamyan was also given a general overview of the Prelacy's endeavors and mission.

At the conclusion of the meeting, the Prelate presented mementos to Mr. Rustamyan and Mr. Izmirlian.

\*\*\*

**ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ Ս. ՊԱՏԱՐԱԳ՝ Ս. ՍԱՐԳԻՍ  
ԵԿԵՂԵՑՅՈՅ ՄԷՋ ԵՒ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՏԻԿՆԱՆՑ  
ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆԻ ԶԵՌՆԱՐԿԸ**



Հինգշաբթի, 2  
Յունիսին, Համբարձման  
տօնին առիթով,  
Փասատինայի Ս. Սարգիս  
եկեղեցւոյ մէջ տեղի  
ունեցաւ հանդիսաւոր Ս.  
Պատարագ,  
հանդիսապետութեամբ  
Թեմիս բարեխնամ  
Առաջնորդ Բարձր. Տ.  
Մուշեղ Արք.  
Մարտիրոսեանի:  
Պատարագեց եւ

քարոզեց Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Կիզէն Ա. Քհնյ. Վասիլեան:

Պատարագէն վերջ, ժամը 11:30-ին, Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը կազմակերպած էր աւանդական ճաշկերոյթ մը, որ տեղի ունեցաւ Փասատիւնայի «Նուռ» ճաշարանին մէջ: Ձեռնարկը կը վայելէր Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնն ու ներկայութիւնը: Հիւրընկալութիւնը յանձն առած էր Տիկին Արուս Զաննա:

Հայաստանի հանրապետութեան գլխաւոր հիւպատոս Տիար Գրիգոր Յովհաննիսեան եւ տիկինը ներկայ եղան Ս. Պատարագին եւ ճաշկերոյթին: Ներկայ էր նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ միաբանութեան երեց անդամներէն Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան:



Ձեռնարկին բացման խօսքը արտասանեց Տիկնանց Օժանդակ Մարմինի ատենապետուհի Տիկին Սալբի Սրուբեան: Ան ողջունեց ներկաները, հակիրճ կերպով անդրադարձաւ հանդիպումի շարժառիթին ու բարի վայելում մաղթելով բոլորին, հրաւիրեց Առաջնորդ Սրբազանը արտասանելու իր խօսքը:

Առաջնորդ Սրբազանը կատարեց սեղաններու օրհնութիւնը, ապա անդրադարձաւ Համբարձման տօնի խորհուրդին եւ անկէ քրիստոնեային ու մարդկութեան հասնող պատգամներուն: Ան նշեց, որ այս պահը պարուրուած է այն խորհուրդներով, որոնք մարմնաւորուեցան առաւօտեան Ս. Պատարագով:

Իր խօսքին մէջ, Առաջնորդ Սրբազանը ներկայացուց ձեռնարկին հիւրընկալ Տիկին Արուս Զաննան եւ գնահատանքով արտայտուեցաւ ներկայ բարերարներու նուիրումին մասին: Առաջնորդ Սրբազանը նաեւ գոհունակութիւն արտայայտեց եւ ողջունեց Հայաստանի գլխաւոր հիւպատոսը, ինչպէս նաեւ ներկաներուն ներկայացուց Մեծի Տանն Կիլիկիոյ երեց միաբաններէն Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեանը, որ այս օրերուն կը գտնուի Լոս Անճելըս եւ հիւրաբար ներկայ էր ձեռնարկին:

Համբարձման տօնին մասին խօսեցաւ Տիկին Զելէն Զալեպլեան: Խօսքի աւարտին, Տիկնանց Օժանդակ Մարմինը յուշանուէրով մը պատուեց յարգելի դասախօսուհին:

Առաջնորդ Սրբազանը, իր կարգին, գնահատանքով արտայայտուեցաւ դասախօսուհիին մասին եւ դրուատեց Տիկնանց Օժանդակ Մարմինի անդամները, որոնք նման ձեռնարկներու յաջողութիւնը կ'երաշխաւորեն իրենց նուիրումով ու անսակարկ ծառայութեամբ: Այնուհետեւ, Առաջնորդ Սրբազանն ու պաշտօնական հիւրերը մեկնեցան:

Ներկաներուն տրամադրուեցաւ Համբարձման երգերու գրքոյկ մը: Կատարուեցաւ աւանդական վիճակաձգութիւն եւ խմբային երգեցողութիւն:

Գեղարուեստական յայտագիրին մասնակցութիւն բերաւ երիտասարդ երգիչ Գագիկ Պատալեան:

## FEAST OF ASCENSION CELEBRATION WITHIN THE PRELACY



Thursday, June 2<sup>nd</sup>, 2011 was the Feast of the Ascension of our Lord Jesus Christ. The Feast was celebrated within the Western Prelacy with Divine Liturgy and the traditional luncheon organized by the Prelacy Ladies Auxiliary.

The day began with Divine Liturgy at St. Sarkis Church in Pasadena presided over by H.E. Archbishop

Moushegh Mardirossian, Prelate, and celebrated by Archpriest Fr. Vicken Vassilian, who also delivered the sermon. Clergy members participated in the service. Consul General Mr. Grigor Hovhannissian and his wife Victoria were also in attendance.

The luncheon followed at Noor Restaurant in Pasadena, under the auspices of and with the participation of the Prelate. This year's luncheon was hosted by Mrs. Arous Hanna.

Among the guests in attendance were Consul General Mr. Grigor Hovhannissian and H.E. Archbishop Gomidas Ohanian.

Welcoming remarks were delivered by Ladies Auxiliary Chair Mrs. Salpi Srourian, who then invited the Prelate to bless the tables and deliver his message.

The Prelate reflected on the meaning and message of our Lord's Ascension. He also acknowledged and thanked Mrs. Hanna for her sponsorship of the luncheon, and greeted the Consul General, Archbishop Ohanian, and the hundreds of guests present.

Mrs. Helen Haleblian was then invited to speak about the history and traditions associated with the Feast of the Ascension.

At the end of the official program, the Prelate commended the Ladies Auxiliary for organizing such events that celebrate and preserve our traditions.

The luncheon continued with a cultural program including a performance by singer Gagik Badalyan. Guests were also handed a booklet of lyrics and participated in the singing of Ascension songs. The traditional drawing of the lots was also held.

\*\*\*

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 93-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ**

Շաբաթ, 4 Յունիսի երեկոյեան, Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան 93-ամեակին առթիւ կազմակերպուած ժողովրդային տօնակատարութեան, որ կը վայելէր Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի հովանաւորութիւնը: Ձեռնարկը տեղի պիտի ունենայ CBS Studios-ի մէջ, Studio City:

Առաջնորդ Սրբազան Հօր պիտի կատարէ սեղաններու օրհնութիւնը եւ պիտի փոխանցէ իր շնորհաւորանքի խօսքը:

Սրտի խօսք պիտի արտասանէ Հայաստանէն հիւրաբար շրջանս գտնուող Հ.Յ.Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ Տիար Արմէն Ռուստամեան:

### **PRELATE TO ATTEND ARMENIAN INDEPENDENCE DAY CELEBRATION**

On Saturday, June 4<sup>th</sup>, the 93<sup>rd</sup> anniversary of the first Republic of Armenia will be celebrated with a banquet to be held under the auspices of the ARF Central Committee at CBS Studios in Studio City.

The Prelate will bless the tables and deliver his congratulatory remarks on this occasion.

ARF Supreme Body representative in Armenia Mr. Armen Rustamyan, who is in Los Angeles to participate in this celebration, will deliver his message.

\*\*\*

### **ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ Ի ՊԱՏԻ ԶԵՌՆԱՐԿ**

Ուրբաթ, 3 Յունիսի երեկոյեան, Իրանահայ Միութեան նորակառոյց սրահին մէջ, տեղի պիտի ունենայ «Նոր Զուղայի Բարեկամներ Յանձնախումբ»ի ձեռնարկը, որ նուիրուած է Նոր Զուղայի հայկական վարժարաններուն:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Գերպ. Տ. Միւռն Տ. Վրդ. Ազնիկեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ Սրբազան Հօր օրհնութեան խօսքը: Ներկայ պիտի ըլլայ նաեւ Ազգային Վարչութեան ատենապետուհին՝ Տիկին Ռիմա Պօղոսեան:

### **"FRIENDS OF NEW JULFA" CULTURAL EVENT**

On Friday, June 3<sup>rd</sup>, a cultural event celebrating the 130<sup>th</sup>, 110<sup>th</sup>, and 107<sup>th</sup> anniversaries of the Armen, Katarinian, and Kananian Armenian Schools

of New Julfa, Iran, will take place at the new center of the Armenian Society of Los Angeles. The event is organized by the "Friends of New Julfa" Committee.

Very Rev. Fr. Muron Aznikian will represent the Prelate and convey his blessings and message. Executive Council Chair Mrs. Rima Boghossian will also attend.

\*\*\*

## ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԷ ՀԱՅ ՇՐՋԱՆԱԽԱՐՏՆԵՐՈՒ Ի ՊԱՏԻ



Հանրային  
Վարժարաններու հայ  
աշակերտներու  
դպրոցական կեանքին  
հետեւող Ազգ.  
Առաջնորդարանի CASPS  
յանձնախումբը,  
Երեքշաբթի, 31 Մայիսի  
յետմիջօրէին,  
կազմակերպած էր  
հանդիսութիւն մը,  
Նուիրուած՝ Լոս Անճելըսի  
հանրային վարժարաններու  
համակարգի երկրորդ  
տեղամասի երկրորդական

վարժարաններու 9-րդէն 12-րդ կարգերու յաջողակ աշակերտներուն:

CASPS-ը, 5-րդ տարին ըլլալով, Նորթ Յոլիվուտի մէջ կը կազմակերպէ այս ձեռնարկը. այս տարի, գնահատանքի արժանացան շուրջ 150 աշակերտներ, իրենց արձանագրած յաջողութիւններուն համար:

Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնն ու ներկայութիւնը վայելող ձեռնարկը տեղի ունեցաւ Լոս Անճելըս Վելի Քալէճի «Մոնարք» սրահին մէջ:

Սրբազան Հօր կ'ընկերանար Գերայ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան: Առաջնորդ Սրբազանը աշակերտներուն փոխանցեց իր շնորհաւորանքի եւ օրհնութեան խօսքը:

Նշենք, որ Հինգշաբթի, 26 Մայիսի յետմիջօրէին, 15-րդ տարին ըլլալով, CASPS յանձնախումբը Կլենտէյլի Brandview Collection սրահին մէջ կազմակերպած էր Կլենտէյլի պետական վարժարաններու աշակերտներուն ի պատիւ հանդիսութիւնը, նմանապէս հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազանին. հիւրընկալուեցան Hoover, Glendale, Crescenta Valley եւ Clark Magnet երկրորդական վարժարաններու յաջողակ հայ շրջանաւարտները:

Առաջնորդ Սրբազան Հօր կ'ընկերանային Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն Արժ. Տ. Վազգէն Քիւյ. Աթմաճեանն ու Արժ. Տ. Արտակ Քիւյ. Տէմիրճեան:

Սրբազան Հայրը շրջանաւարտներուն փոխանցեց իր օրհնութիւններն ու շնորհաւորանքի խօսքը:



Չորեքշաբթի, 1 Յունիսի երեկոյեան, հովանաւորութեամբ ու ներկայութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր, Փասատիւայի Զայ Կեդրոնին մէջ տեղի ունեցաւ քաղաքի Պետական Երկրորդական վարժարաններու հայ շրջանաւարտներու գնահատանքի հանդիսութիւնը:

22-րդ տարին ըլլալով, ձեռնարկը կազմակերպուած էր Ս. Սարգիս Զայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հովիւին եւ հոգաբարձութեան կողմէ: Ներկայ էին Եկեղեցւոյ երեսփոխաններ, Տիկնանց Սիւրբեան անդամներ, շրջանի Զ.Յ.Դ. «Լեռնավայր» Կոմիտէի եւ Փասատիւա շրջանի կազմակերպութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներ, Pasadena Unified School District-ի ներկայացուցիչներ, տնօրէններ, ուսուցիչներ, աշակերտներ եւ ծնողներ:

Առաջնորդ Սրբազանը կատարեց սեղաններու օրհնութիւնը: Ան շնորհաւորեց շրջանաւարտները, նորանոր յաջողութիւններ մաղթեց անոնց՝ իրենց ուսումնական յառաջիկայ աշխատանքներուն մէջ, եւ փոխանցեց իր գնահատանքի եւ օրհնութեան խօսքը:

## PRELATE CONGRATULATES ARMENIAN GRADUATES FROM PUBLIC HIGH SCHOOLS



The Committee for Armenian Students in Public Schools (CASPS) each year honors outstanding Armenian students graduating from the Glendale and Los Angeles Unified Schools Districts. A similar reception is organized by the Pastor and Board of Trustees of St. Sarkis Church for Armenian students graduating from the Pasadena School District.

The 5<sup>th</sup> annual reception for outstanding LAUSD high school students was held on Tuesday, May 31<sup>st</sup>, at Monarch Hall of Los Angeles Valley College. The Prelate was accompanied by Very Rev. Fr. Muron Aznikian.

The 15<sup>th</sup> annual reception honoring graduates from the Glendale School District was held on Thursday, May 26<sup>th</sup>, at Brandview Collection in Glendale. The Prelate was accompanied by Rev. Fr. Vazken Atmajian and Rev. Fr. Ardak Demirjian.

The 22<sup>nd</sup> annual reception for Pasadena schools' students was held on Wednesday, June 1<sup>st</sup> at the Pasadena Armenian Center. In attendance were church delegates, Ladies Guild members, ARF Lernavayr Gomideh members,

representatives of community organizations and the Pasadena School District, principals, and teachers.

All three receptions were held under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, who also attended and conveyed his blessings and message to the graduates.

\*\*\*